

ԱՐՑԱԽԻ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՄԱՆ ՓՈՐՁ\*

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Արցախի տեղանվանագիտություն, պատմական շրջանաբաժանում, ենթաշերտային տարրեր, լեզվական ազդեցություն, վերանվանումներ, պատմական ու քաղաքական գործընթացների ազդեցություն:

## Նախաբան

Արցախի տեղանվանական համակարգի պատմական զարգացման ընթացքը բնութագրելու համար կարևոր է այդ համակարգի զարգացման բոլոր փուլերի հատկանշական կողմերի վերհանումը: Ռուս լեզվաբան, հատկանվանագետ Վլադիմիր Ա. Նիկոնովը գրում էր, որ «ոչ ոք չգիտի և չի էլ կարող իմանալ, թե որն էր առաջին տեղանունը, և դա գիտություն «թուլություն» չէ բնավ»: Բայց և հին ժամանակներից առ այսօր էլ հայտնի բոլոր եղանակներով, հնարավոր բոլոր միջոցներով մարդկությունը փորձում է գտնել իր առաջին կայանը, առաջին անունը:

Աշխարհագրական անուններն այս կամ այն երկրամասի տեղանվանական համակարգն ամփոփող տեղեկատվության աղբյուր են: Նվ համակարգի յուրաքանչյուր միավոր տեղեկատու է՝ պատմական, աշխարհագրական ու լեզվաբանական առումներով: Ուստի և տեղանվանական համակարգի շրջանաբաժանման փորձը ենթադրում է այդ միավորների պատմաաշխարհագրական նկարագրի ու լեզվաբանական բնութագրի համաժամանակյա վերլուծություն՝ լեզվական հետազոտության տարածամասնակյա սկզբունքի զուգակցությամբ:

Տեղանվանական համակարգի շրջանաբաժանման այս փորձը նպատակ ունի պատմալեզվաբանական իրողությունների վկայությամբ ու վերլուծությամբ բացահայտելու Արցախի տեղանվանական համակարգին բնորոշ իրողությունները և այդ համակարգի զարգացման օրինաչափությունները:

Շրջանաբաժանումը կատարելիս մեր ուսումնասիրության ուղղությունն էր՝ տեղանվանական իրողությունների վերլուծությունից դեպի պատմալեզվաբանական շերտագրումների բացահայտում, այսինքն՝ տեղանվանական փաստերի քննությունից, օրինակների վկայությունից դեպի ընդհանրացում և եզրակացություն՝ համապատասխան փուլի առանձնացում:

\* Ներկայացվել է 27. V. 2024 թ., գրախոսվել է 04. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.: Հոդվածը որպես զեկուցում ընթերցվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում 2024 թ. ապրիլի 6-ին կազմակերպած «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական նստաշրջանում:

<sup>1</sup> Никонов. 1965, 28.

Շրջանաբաժանման հիմքում երեք սկզբունք են դառնում հենանիշ.

1. տեղանվանական համակարգի պատմությունը բոլոր առանձին փուլերի պատմությունն է,
2. շրջանաբաժանումը բացարձակ լինել չի կարող,
3. տեղանունների առաջացումը, դրանց փոփոխություններն անմիջականորեն կապված են տվյալ ժողովրդի պատմության հետ:

Այս սկզբունքների հաշվառմամբ տեղանվանական համակարգի զարգացման ընթացքի շրջանաբաժանումը կատարելիս երկու ուղղություն է առանձնացվում.

1) տեղանվանական փաստերի վերլուծության ժամանակ հաշվի առնել պատմական իրողությունները և ըստ այդմ հատկանշել պատմական շերտագրումները,

2) տեղանունների լեզվաբանական վերլուծությամբ փաստարկելի դարձնել լեզվական ազդեցությունների շերտագրումները:

Քննությունը ներառում է Արցախի տեղանվանական համակարգի միավորների առաջին արձանագրությունից մինչև անկախության շրջանի տեղանվանացանկի միավորների ամփոփ դիտարկումը:

### Արցախի տեղանվանական համակարգի զարգացման ընթացքի շրջափուլերը

Առաջին փուլ կամ Հին շրջան (Ք. ա. VIII դարից մինչև Ք. հ. V դար)

Յուրաքանչյուր շրջափուլ ունի իր տեղանվանացանկը, որոնց լեզվաբանական քննությունը, բառակազմական նկարագրությունը հաստատում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվահարաբերությունները, և յուրաքանչյուր առանձնանշված փուլ իրապես ներկայացնում է նաև Արցախի տվյալ շրջանի պատմական, քաղաքական, աշխարհագրական իրողությունները:

Ա. Սեպագիր արձանագրությունների առաջին վկայություններում Արցախի տարածքի մի շարք անուններ են նշվում<sup>2</sup> Աղախունի-Ուրտեխե-Արցախը<sup>3</sup>,

<sup>2</sup> Ներկայացնում ենք այն բոլոր տեղանունները, որոնց քննության անդրադարձներում ուրարտական, խեթա-խուտիական, ասուրա-բաբելական, էլամական ենթաշերտերի հնարավոր աղբյուրներ են փնտրել լեզվաբաններն ու պատմաբանները:

<sup>3</sup> Պատմական տեղեկանքը փաստում է. «Վանի կամ Արարատյան հայկական թագավորության երկու գահակալները Ք. ա. 8-րդ դարում արձանագրել են, որ իրենք դեպի հյուսիս, հյուսիս-արևելք կատարած արշավանքներով իրենց տերությանն են միացրել նոր երկրամասեր, որոնց հետ է եղել նաև Աղախ-Արցախը (սեպագրերում Աղախունի)» (Կ ա Ր ա գ յ ո գ յ ա ն. 1998, 40—41): «Սարդուրի Բ-ի կողմից Գանձադուան տարեգրության հաստատման մեկում Ք. ա. 741 թ. տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ և Ռուսա Ա-ի Ծովինարի ժայռափոր արձանագրության մեջ հիշատակված է Աղախունի տեղանունը» (Никольский. 1896, XXXI; Меликишвили. 1960, 266): «Ստեփանակերտի ու Խոջալուի դամբարանաբլուրներից պեղված նյութերից մեկը՝ սարդիոնե զարդանախշը, ունի Ռուսա թագավորի անվան հիշատակությամբ արձանագրություն: Սա էլ մի վկայություն է, որ հայկական այդ թագավորության մեջ էր գտնվում Արցախը, մանավանդ երբ հենց նույն Ռուսա թագավորի սեպագրի մեջ

Արդախը, Գիշին, Տրտուն, Հարճլանքը, Պարձկանքը, Պիանքը, Կուրավանը<sup>4</sup>, Թաղավարը:

Այսպես՝ ենթաշերտային այդ տարրերի առկայության փաստն է հավաստում Ուրտեխե-ի բառակազմությունը: Գրիգոր Ղափանցյանն անառարկելիորեն Ուրտեխեն նույնացնում է Արցախին և հաստատում է, որ Հայաստանի տեղականագիտության մեջ պահպանվել են մի շարք անուններ՝ ափսոսաբանափորությամբ<sup>5</sup>: Իսկ այդ -ha մասնիկը խոռոչառարտական -hi հատկացուցչական-տեղանվանական մասնիկն է՝ i-a հերթագայությամբ: Գևորգ Զահուկյանն այս կարծիքը հավանական է համարում՝ նկատի ունենալով ածանցի տարածման ոլորտն ու նաև խեղճալուսական աղբյուրից առաջացումը<sup>6</sup>:

Հայ-խեղճական հնարավոր աղբյուրակցության վկայություն է Թաղավարը տեղանունը, որը խեթերեն watar-ը ուր բառի հետ է կապվում: Ինչպես նշում է Գր. Ղափանցյանը՝ խեթերեն «widar» = հայերեն «urd» -ը ուր իմաստով պահպանված ունենք եղվարդ (ենթադրաբար՝ Վերին ջուր) և Թաղավարը (ենթադրաբար՝ Ներքին ջուր) տեղանուններում<sup>7</sup>:

Տրտու և Գիշի տեղանունների քննության մասին Բաբկեն Հարությունյանը նշում է, որ դրանք ունենին ini-ն ուրարտական վերջավորությունը (Sanatua-ini, Gisua-ini): Իբրև այս տեղանունների վաղնջահայկականության փաստի հավաստում՝ նա գրում է, որ այդ հնագույն տեղանունները տրված են հայերենի սեռական հոլովով, որին հավելվել է բիայնական -ini վերջավորությունը<sup>8</sup>: Իսկ Գր. Ղափանցյանը նշում է, որ տեղանվանակերտ այդ -ina/ini մասնիկը հանդիպում է Փոքր Ասիայի արևելյան երկրների, Ուրարտուի, խուռոփական աշխարհագրական շատ անուններում<sup>9</sup>:

Վկայված տեղանունների այս փաստերը՝ տեղանվանակերտ բաղադրիչների ծագումնաբանական պատկանելության որոշարկումով, կարևոր են և հիմք են հնարավոր մի փուլի առանձնանշման համար:

Բ. Հաջորդիվ առկա արձանագրությունները վերաբերում են արդեն հունալատին աղբյուրներում, ապա և հայոց գրավոր աղբյուրներում Արցախի մասին առաջին վկայություններին:

Ստրաբոնը, Ք. ա. I դարի Հայաստանը նկարագրելով որպես ականատես, նրա կազմի մեջ ներկայացրել է Ծախաշեն-Ուտիքը և Օրխիստինա-Արցախը՝ որպես այդ երկրի բուն նահանգներ<sup>10</sup>: Օրխիստինան Արցախի հունարեն անվանումն է: Օրխիստենե-Արցախ նույնականությունը հավաստի է, և Ալեքսան Հակոբյանն Արցախը հունալատին աղբյուրներում հարցի լուսաբանման շուրջ գրում է. «Համադիր քննութեամբ ցույց է տրուում նաև, որ Օրխիստենի

առկա է նաև Աղախ-Արցախի պարզ հիշատակությունը» (Ուլոբայն. 1994, 18):

<sup>4</sup> Կարապետյան. 1998, 40–41:

<sup>5</sup> Капанцян. 1931, 104.

<sup>6</sup> Զահուկյան. 1987, 331:

<sup>7</sup> Капанцян. 1956, 82; Ղափանցյան. 1961, 152:

<sup>8</sup> Հարությունյան. 1994, 258:

<sup>9</sup> Капанцян. 1956, 438.

<sup>10</sup> Страбон. 1964, 497.

(Արցախի—Լ. Մ.) մէջ պէտք է պատկերացնել աշխարհացոյցեան Սոթք, Հարջլանք, Մեծ Իրանք եւ Պիանք գաւառները, իսկ Արաքսէնէի մէջ՝ գրեթէ ողջ հարաւային Արցախի (հետագայ Գորոզուի իշխանութեան), գումարած հետագայ Սիւնիքի հարաւային հատուածը՝ գոնէ Հաբանդի ընդգրկումով»<sup>11</sup>: Այս պատմաշրջափուլում Մեծ Հայքի 10-րդ նահանգի ու նրա գաւառների գրավոր առաջին արձանագրութիւններն են վկայւում<sup>12</sup>:

Տեղանունների բառակազմական կաղապարները և առավելաբար բառակազմական ձևութիւնները հաճախ դառնում են տեղանվան ծագումն ու պատկանելութիւնը որոշարկող նշույթներ:

Այս առումով հետաքրքրական է -ք հոգնակերտ-տեղանվանակերտ մասնիկի ակտիվ գործառութիւնն այդ շրջանի տեղանուններում: Դա հայոց տեղանվանագիտութեանը բնորոշ երևույթ է: Այսպէս՝ թե՛ սեպագիր արձանագրութեան մեջ նշված և հայերեն գրադարձված երեք անուններում՝ Հարճլանք, Պիանք, Պարսկանք, և թե՛ գրավոր մյուս աղբյուրներում վկայված արցախյան մյուս 3 գաւառանուններում՝ Մեծ Կողմանք // Մեծ Կուանք, Մեծ Իրանք // Մեծ Առանք, Վայկունիք, ընդհանրական մեկ հատկանիշ է առանձնանում՝ -ք մասնիկի առկայութիւնը: Հատկանշելի է, որ հնագույն ժամանակներում ցեղանվան, անձնանվան կամ աշխարհագրական այլ անունների և հոգնակերտ մասնիկների բաղադրութեամբ կերտվում էին հայոց տեղանուններ:

Գրավոր աղբյուրներում վկայված նշյալ անուններում առկա հոգնակերտի՝ որպէս տեղանվանակազմիչ միավորի գործածութիւնը հատկանշելի է նրանով, որ հաստատում է Արցախի որպէս հայկական ընդհանուր տեղանվանահամակարգի մասը լինելու փաստը, իսկ ընդհանուր տեղանվանադաշտում այդ երևույթը դիտվում է իբրև տեղանվանական զուգաբանութեան դրսևորում:

Հունաբանութեան հնարավոր ազդեցութիւնն են վկայում Արցախի Մյուս Հաբանդ, Վարանդա գաւառանուններում անդ-այ /անդա տեղանվանակերտ ցուցիչները: Գր. Ղափանցյանի դիտարկմամբ՝ -anda տեղանվանակազմական մասնիկի առկայութիւնը Հայոց, Վրաց աշխարհներում է նկատելի, և հին սեպագրական փաստերն այդ ածանցով տեղանուններ չեն վկայում Հայոց աշխարհի տարածքում: Դրանք առկայանում են արդեն ավելի ուշ և հիմնականում այն ժամանակաշրջանում, երբ նկատելի էր հունականութեան ազդեցութիւնը<sup>13</sup>:

Այսպիսով՝ հիմք ընդունելով սեպագիր արձանագրութիւնների դիտարկումները, ապա և գրավոր առաջին վկայութիւնների լեզվական փաստերը՝ կարելի է պայմանականորեն առանձնացնել առաջին փուլը կամ Հին շրջանը (Ք. ա. VIII դարից մինչև Ք. հ. V դարը)՝ այն երկու ենթաշրջանների բաժանելով:

ա) սեպագիր արձանագրութիւնների շրջան. հնարավոր ենթաշերտային տարրեր՝ ուրարտական, խեթա-խուրիական, ասուրա-բաբելական,

<sup>11</sup> Յ ա կ ո բ ե ա ն. 2020, 64:

<sup>12</sup> Յ ա կ ո բ ե ա ն. 2013, 139–140: Տե՛ս նաև Բ ա ր խ ու ղ ա ր յ ա ն ց. 1996, 170–173:

<sup>13</sup> Капанцян. 1956, 415.

բ) քրիստոնեության մուտքի և գրավոր առաջին վկայությունների չըջան. հնարավոր ենթաշերտային տարրեր՝ հունական, իրանական:

Երկրորդ փուլ կամ Միջին չըջան (V դարից մինչև XVIII դար)

Քրիստոնեացված Արցախի և քրիստոնեական կրոնի ազդեցությունն ու տարածումը խորհրդանշող աշխարհագրական անունների արձանագրությունը և դրանց ծագման կրոնական մեկնությունները բացահայտում են հաջորդ չըջանի մեկնարկային նկարագրությունը:

Աշխարհագրական այդպիսի անուններ են Դադի վանքը, Վանքը, Զրվչտիկը, Եղիշեի վանքը, Սբ. Ղևոնդիկը, Ավետարանոցը, Դարահոջ գյուղը, Դյուլթականը կամ Դյուլտականը, Դաստակերտը, Աղվեն ամառանոցը և այլն. սրանք անուններ են, որոնք հիշատակվում են տվյալ ժամանակաշրջանը նկարագրող պատմական աղբյուրներում: Ու եթե դիտարկվեն պատմական իրողությունները, ապա այդ չըջանում Աղվանից մարզպանության ներսում ստեղծվում է վարչաքաղաքական ինքնուրույնություն ունեցող պետական ձույլ մի միավոր, որը պատմությանը հայտնի է որպես Աղվանից թագավորություն<sup>14</sup>: Եվ Արցախի քրիստոնեացումն ու քրիստոնեական ավանդների տարածումը մեծապես կապվում են այս չըջանին:

Ըստ «Աշխարհացույցի» (աշխատասիրություն՝ Ալեքսան Հակոբյանի)՝ ներկայացված տեղանվանացանկը հնարավորություն է տալիս որոշակիորեն ուրվագծել ժամանակաշրջանի լեզվական պատկերը: Այսպես՝ Կաղանկատույք, Մոխրաթաղ, Մարտակերտ, Ծափանիս, Կուսապատ, Զղախ, Ծանկաթաղ, Տիգրանակերտ, Առաջածոր, Վաճառ, Խնձրիստան, Խանձք, Մայրաբերդ, Քյաթուկ, Մեղրենիս, Հացի, Արաժան, Վարանդա, Դոնավարդ, Հերհեր, Քարուէճ և այլն. ընդհանուր տեղանվանահամակարգից քաղված այս նախանմուշի տեսակարար կազմի բառակազմական կաղապարների քննությունը հաստատում է, որ մայրենի միավորները սերող հիմքեր են, ինչպես՝ մոխիր, կույս /կողմ/, թաղ, ձոր, խանձ, մայր, վար, իսկ բաղադրող հիմքերը հիմնականում իրանական ենթաշերտի տարրեր են, ինչպես՝ կերտ, ստան, ուկ, որոշ դեպքերում նաև սերող հիմքերն են իրանական, ինչպես՝ վաճառ: Հատկանշելի է, որ գրեթե բոլոր պատմաշրջաններում իրանական ծագման տեղանվանակերտ մասնիկներն արտադրողականությամբ ակտիվ ու կենսունակ են եղել:

Այս պատմաշրջանում մշտակա ու հերթափոխվող ազատագրական պայքարով (հակապարսկական, հակաարաբական, հակասելջուկյան, հակամոնղոլական) պայմանավորված՝ տեղանվանական արձանագրություններում ևս մեկ կարևոր առանձնահատկություն է նշվում, որի հիմքը պատմական իրողությունն է, և որն արտահայտվել է տեղանվանական զուգաբանությամբ: Սեմական ծագման տեղանվանակերտ բերվ բաղադրիչով վկայված տեղանունները մեծ թիվ են կազմում հենց այս փուլի վերջին չըջանում, որը շարունակվում է հետագա դարերում, ու համաժամանակյա դիտվածքով նաև բազմանունություն է առաջանում, ինչպես՝ Զրաբերդ, Խաչեն բերդ // Կաչաղակաբերդ // Հավթախաղաց բերդ, Հանդաբերդ, Լևոնաբերդ, Խանդաբերդ, Խոխանաբերդ, Հակառակաբերդ, Բերդաբար, Ականա բերդ, Ուլուպապաբերդ և այլն: Այս

<sup>14</sup> Ուլուբաբյան. 1994, 29:

տեղանվանացանկի հաստատական քննությունն է նաև հաստատում է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվահարաբերությունները, որոնք հիմնավորվում են պատմական փաստերով:

X դարում Արցախում հաստատված էր ինչպես իշխանությունը: Դրա գոյության դադարից հետո (XIV դար) մինչև իսլամայի մեկիքությունների շրջանը (XVIII դար) Արցախում վարչատարածքային նոր միավորներ չեն ձևավորվել: Եվ արցախյան տեղանվանացանկում նոր խմբագրումներ չեն եղել:

Ըստ այդմ որպես երկրորդ փուլը կամ Միջին շրջանը պայմանականորեն կարելի է ընդունել Ք. հ. V դարից մինչև XVIII դարը տրոհելով 2 ենթաշրջանների.

ա) առաջին ենթաշրջան. V դարից մինչև X դար՝ մինչև ինչպես իշխանության հաստատումը ողջ Արցախում,

բ) երկրորդ ենթաշրջան. X դարից XVIII դարն ընկած ժամանակահատվածը:

Երրորդ փուլ կամ Նոր շրջան (XVIII դարից մինչև XX դար) դառնալիքը (1923 թ.)

XVIII դարում իսլամայի մեկիքությունների գոյության փաստը, նաև այդ դարից հետո հայաբնակ Արցախի՝ այլազգիներով բնակեցման իրողությունը և դրանցով պայմանավորված վարչատարածքային փոփոխությունները (եկեղավետալոյի գավառի վարչաքաղաքական միավորի ձևավորումը, ապա և 1918–1920 թթ. դրա՝ Մուսավաթական Աղբեջանի կազմի մեջ ամբողջական ընդգրկումը)<sup>15</sup> տեղանվանական միավորների վերամասնավորման կամ նոր միավորների վերանվանումների գործընթացի են հանգեցրել: Վերանվանումները պայմանավորված էին պատմաքաղաքական իրողություններով, իսկ անվանակոչումների հիմքը՝ այս կամ այն վարչական միավորի կամ բնակավայրի քաղաքական կշռի նշանակալիությունը:

Այսպես՝ Մյուս Հաբանդի տարածքը տրոհվեց Դիզակի և Վարանդայի մեկիքությունների, Մեծ Իրանք / Մեծ Առանքը՝ ինչպես գավառի, իսկ մեկիքությունների շրջանում՝ Զրաբերդի կամ Զարաբերդի մեկիքության, Մեծ Կվենքը՝ Գյուլիստանի մեկիքության, որի գոյության ժամանակ մինչև այդ անբաժան եղած Զրաբերդ և Գյուլիստան գավառները<sup>16</sup> մեկիքության շրջանում բաժանվում են, Վայկունիքի և Բերդաձորի որոշ տարածքներ կազմել էին Ծար գավառը, որը կազմում էր Վերին ինչպես մի մասը:

Ինչպես նշում է Պավել Չորանյանը, «17–18-րդ դարերում Արցախում և Երևանի խանությունում հայ բնակչության կողմից օգտագործվող տեղանունների բուն հայկական տեղանունների համակարգից զատ աստիճանաբար առաջանում է երկրորդ շերտը՝ հայկական տեղանուններից ածանցված անվանումներ, որոնք թարգմանաբար կամ հնչյունափոխված ձևով մասնաբաժան իշխանությունները դյուրացնում էին թյուրքերեն արտասանության համար»<sup>17</sup>: 1823 թ. ռուսական իշխանության կողմից իրականացված ու կազմված «Описание Карабагской провинции, составленное в 1823 году» փաստաթղթի մեջ արդեն երևում էին թե՛ տեղանունների պաշտոնական անվանափո-

<sup>15</sup> Բ ա լ ա յ ա ն. 2011, 296–297:

<sup>16</sup> Բ ա լ ա յ ա ն. 2011, 21–22:

<sup>17</sup> Չ ո Ր ա ն յ ա ն. 2014, 2:

խուլթյունները, թե՛ նոր՝ օտարահունչ տեղանունները. ինչպես՝ Բերդաձորը՝ Կալադարասի, Կաղարծի-Կաղարզա, Թաղերը՝ Թաղլար, Մխիթարաշեն-Մխիթարքենդ, Նորշեն-Նուրաշին, Ղըշլաղքենդ (հայկական գյուղ), Ղարալի (հայկական գյուղ), Ղայքալու (հայկական գյուղ), Ղարաղաղլու (թաթարական), Հաջիլար (թաթարական) և այլն<sup>18</sup>:

Հատկանշելի է, որ այդ փաստաթղթի մեջ 1817 թ. մահմեդականների՝ Արցախ ներհոսքի հետևանքով ստեղծված նոր բնակավայրերի ու կացավայրերի անվանումներն էլ են վկայվել: Ինչպես գրում է Պ. Չոբանյանը, նույնիսկ 2 տարվա վաղեմության տեղանուններն են արձանագրվել. օրինակ՝ Սուբղան-վերդի, Խասիլի, Մերջանլու, Սարվանլար և այլն:

Ըստ էության, մինչև XVIII դարն Արցախի տեղանվանահամակարգի լեզվական պատկերում եկամուտ տարրերը երկրորդային շերտ չեն կազմել, հիբրիդ տեղանունների համակարգ չի ստեղծվել. կարևոր է նաև նշել, որ այդ միավորները, օրինակ, իրանական շերտի տարրերը նոր տեղանվանակոչումներում վերախմաստավորվել են ու այլևս փոխառյալ չեն ընկալվել կամ դիտարկվել (ապատ, չեն, ստան), մինչդեռ նշված դարից հետո ու շարունակաբար նաև խորհրդային շրջանում տեղանվանական համակարգում զուգահեռաբար օտար շերտ է ձևավորվել, որը իրավական-փաստաթղթային վավերացում է ստացել:

Այսպես՝ ըստ գավառների ներկայացնելով պատկերն ամբողջապես տեսանելի է դառնում (տրվում է ըստ Մակար Բարխուդարյանցի)<sup>19</sup>. Դիզակի գավառում նշվող բնակավայրերն են՝ Ջաբրայել, Առաքել, Ջիլան, Բինեաթլու, Ծամձոր, Շաղախ, Քարապուլիս, Բանագուր, Ղուչչիլար, Նորաշեն, Հատուլթ, Որդնաշատ, Թղասեռ, Կարմրագուռ, Քոչքեկ, Մելիքջանլու, Պեթանց, Խարմանջուղ, Աղ-բուլաղ, Լիսեցիք, Իտելեցիք, Հիւքիւրաթաղ, Ողեր, Ջրակոյս, Մամատաձոր, Ծակուտի, Հկակուշեն, Թաղոտ, Դող, Մոխրենիս, Տումի:

Կամ Վարանդայի գավառը՝ Թաղլար, Ազոխ, Նոր Դրախտիկ, Շեխեր, Ներքին Թաղավարդ, Վերին Թաղավարդ, Մոշ-խմհատ, Սարգսաշեն, Ղարաբուլաղ, Ալամանց գոմեր (Մաղաթաշեն), Ջաղացներ, Աւետարանոց, Սղնախ, Վերին Սղնեք, Ներքին Սղնեք, Խաչմաչ, Սարուշեն, Մաւաս չէն, Բլբլակ, Սխտորաշեն, Հիրհեր, Ծովատեղ, Խերխան, Մամայ, Հզորդի, Հարաւ, Նինկի, Ղավախան, Ենկիջան, Պառաւաթումբ, Կղարծի, Մջկապատ, Քարահունջ, Քերթ, Սօս, Ղուզի ձարտար, Կիւնի ձարտար, Խունըշինակ, Կիշի, Սպիտակ չէն, Եմիշջան, Աշան, Ղզղալա, Նոր-չէն, Հացի, Ավտուռ Միւրիշէն, Միրիշալլու, Վարազաբուն (Արանգամի) և այլն:

Ամփոփելով այդ ժամանակահատվածի իրողությունները՝ առանձնացվել է պայմանականորեն երրորդ փուլը՝ XVIII դարից մինչև XX դարը՝ Նոր շրջան անվամբ:

Չորրորդ փուլ կամ Խորհրդային շրջան [XX դարակզբից մինչև XX դարավերջ (1991 թ.)]

XX դարասկզբի պատմական իրողությունները վերստին խմբագրում են Արցախի տեղանվանացանկը: Քաղաքական նոր իրողությունը՝ Լեռնային

<sup>18</sup> Описание Карабагской провинции, составленное в 1823 году. 1866, 40–45.

<sup>19</sup> Բ ա Ր խ ու դ ա Ր յ ա ն ց. 1996, 101:

Ղարաբաղի ինքնավար մարզի հռչակումը<sup>20</sup>, վարչատարածքային փոփոխություններ է առաջացնում<sup>21</sup> և, բնականաբար, այդ ամենն արձանագրվում է տեղանվանական համակարգում: ԼՂԻՄ-ը բաժանում է 4 շրջանի՝

1. Ջրաբերդի շրջան՝ Մարտակերտ կենտրոնով,
2. Խաչենի շրջան՝ Խանքենի կենտրոնով,
3. Վարանդայի շրջան՝ Ճարտար կենտրոնով,
4. Դիզակի շրջան՝ Հադրուկ կենտրոնով:

1927 թ. նոյեմբերի 11-ից Վարանդայի շրջանը վերանվանվեց Մարտունու շրջան, Խաչենի շրջանը՝ Ստեփանակերտի շրջան, որը հետագայում (1977 թ.) դարձավ Ասկերանի շրջան, 1932 թ. նոյեմբերի 6-ին Ջրաբերդի շրջանը՝ Մարտակերտի շրջան, Դիզակի շրջանը՝ Հադրուկի շրջան: 1932 թ. Խաչենի ձորակը (Առաջածորի ենթաշրջան) իր 21 գյուղերով հանձնեցին Ջրաբերդի (Մարտակերտի) շրջանին, իսկ մյուս գյուղերով Խաչենը վերանվանվեց Ստեփանակերտի, այնուհետև՝ Ասկերանի շրջան:

Խորհրդային ժամանակաշրջանում տեղանվանական համակարգը վերաձևվեց, եթե XVIII դարից հետո գոյություն ունեցող տեղանունները թարգմանությունը կամ օտար տեղանվանական մասնիկների կցումով փոխակերպվում էր բնակավայրի անվանումը, ինչպես՝ Քարադուլխ—Դաշբաշի, Բերդածոր—Ղարադըշլաղ, Քարին տակ—Դաշալթի և այլն, ապա խորհրդային շրջանում այդ ամենը նաև իշխող գաղափարախոսության համապատասխանեցնելու պահանջ կար. Մաշադիչենն անվանվեց՝ Կոլխոզաչեն, Մարգուչեանը՝ Լենինավան, Խոնաչենը՝ Մարտունի, Դոնավարգը՝ Կարմիր գյուղ, Ստեփանակերտ դարձան Նախկին Վարարակն, Ներքին չեն, Սողոմոնի չեն, Նոր Արմենավան, Կրկժան, Փահլուկ կամ Փահլուր, իսկ անկախության շրջանում նաև Մայիբեկլու գյուղերի տարածքը:

Դրանցից որոշներն ամրագրվել են ու արդեն հուշարձան տեղանուններ են, մի մասն էլ՝ նորից վերանվանվել ավելին՝ 1962 թ. մի նոր պլեք բարձրացավ տեղանունների վերանվանելու պահանջով: Բոլոր շրջաններում կազմակերպվեցին կոմկուսի ժողովներ՝ քննարկելու և ներկայացնելու բնակավայրի անվանումը՝ նոր գաղափարախոսության համապատասխան: Թեպետ հիմնականում բնակավայրի մտավորականությանն էր վստահած այս գործառույթը և առաջարկվում էին հայրենասիրական, գեղարվեստական ու ոգեշունչ անվանումներ, բայց երևույթն ինքնին մերժելի է, որովհետև նոր անվանակոչումները նախ անցյալի հետ պատմական կապն էին խզում, երկրորդ՝ դիպվածային անվանումների ցանկն էր ընդլայնվում՝ հետագա գիտական ուսումնասիրությունների ընթացքը շեղելով:

<sup>20</sup> 1922 թ. դեկտեմբերի 15-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունից կենտրոնական կոմիտեի անդամ Արմենակ Կարադյուզովի (1890–1939) նախագահությամբ 7 հոգուց բաղկացած հանձնաժողովը զբաղվում է Շուշիի, Ջեբրայիլի և Ջիվանչիրի գավառների հողային սահմանների հարցով և ՌԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեի պենումի որոշման համաձայն՝ Ադրբեջանի Կենտգործոմի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով Լեռնային Ղարաբաղը հռչակվում է ինքնավար մարզ (Нагорный Карабах в 1918–1923 гг. 1992, 669–670):

<sup>21</sup> 1923 թ. օգոստոսի 15-ին Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմին կից լիկվիդացիոն հանձնաժողովն ինքնավար մարզը բաժանում է 4 շրջանի:

Այսպես՝ Խնապատ-ը թուրքական տիրապետության մի կարճ ժամանակաշրջանում վերանվանվել էր Թեզիսարաբ, ապա 1962 թ. անվանադրվել Ոսկե-վազ, իբրև լրացյալ անուններ առաջարկվել էին Այգեձոր և Մրգաշատ անունները<sup>22</sup>։ Տրված անուններից և ոչ մեկը հետագայում չամրակայվեց հանրային գիտակցության մեջ, ու գյուղը ԼՂՀ անկախության շրջանում նորից վերանվանվեց Խնապատ։ Կամ 1962 թ. օգոստոսին Քոչքեկն առաջարկվում էր վերանվանել Արևշատ կամ Քարակերտ<sup>23</sup>, իսկ 1998 թ.՝ Այգեստան։

Ինչպես հաստատում են փաստերը, այդ ժամանակահատվածում Արցախի տեղանվանահամակարգը հատկանշվեց զգալի փոփոխություններով, որը և նոր փուլ առանձնանշելու հիմք է պայմանականորեն չորրորդ փուլը կամ Խորհրդային շրջանը՝ XX դարասկզբից մինչև XX դարավերջ (1991 թ.)։

Հինգերորդ փուլ կամ ԼՂՀ անկախության շրջան (1991–2020 թթ.)

Հաջորդիվ նոր շրջան է սկսում՝ պայմանավորված պատմաքաղաքական իրողությունների շրջադարձով և Արցախի կյանքում նոր պայմանների ստեղծմամբ՝ անկախության հռչակմամբ։

1998 թ. հունիսի 26-ի որոշմամբ, որը հետագայում օրենսդրական 7 լրացումներով փոփոխությունների է ենթարկվել, հաստատվել էր մինչ 2020 թ. վարչատարածքային կառուցվածքը՝ 7 վարչատարածքային շրջաններով՝ Հաղ-րուժի, Քաշաթաղի, Մարտունու, Ասկերանի, Շուշիի, Մարտակերտի, Շահում-յանի<sup>24</sup>։ 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում կար 228 համայնք, 337 բնակավայր, գործող 308 բնակավայր<sup>25</sup>։

Այս շրջափուլի տեղանվանական համակարգը հատկանշվում է օտար շերտի հայերենացման միտումով։ Եթե որոշ դեպքերում հին ու նոր անվանումների փոխակերպումներում պահպանվել են պատմական կապերը, ինչպես՝ Հաթնաշեն-Խաթնաձոր, Միջնավան-Մինջևան, Մարիամաձոր-Մամեղաձոր, Դալք-Դալաքլի, Արտաշավի-Արտաշեի, Հախնազար-Ախնազար, Հայկազյան-Կազյան, Հոջանց-Գոջաց, Մամարք-Մամար, Հալե-Գալ, Մշենի-Միշնի, Շամք-Շամքենդ, Ջորմանք-Ջորման, Քարեզահ-Կարիկահա, ապա շատ դեպքերում բնակավայրերը վերանվանելիս միշտ էլ պատմական զգուշություն դրսևորվել։ Դա նկատելի է առավելաբար Քաշաթաղի և Շահումյանի (նախկին՝ Քարվաճառի) շրջաններում։ Վերանվանումները շատ դեպքերում պատմական անունների վերականգնումներն են, կորցրածը խորհրդանշող հուշարձաններ՝ ոչ տեղագրական ճշգրտությամբ ու պատմական կապի նույնականությամբ։ Ինչպես՝ Կովսական, Դիցմայրի, Եզնագոմեր, Գողթանիկ և այլն, կամ էլ՝ Նոր Վերին (Շահումյանի շրջանում կար Վերին շեն ավան, որն Արցախյան առա-

<sup>22</sup> ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 17։

<sup>23</sup> ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 17։

<sup>24</sup> ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին ԼՂՀ 1998 թ. հունիսի 26-ի ՀՕ-15 օրենք, Հավելված թիվ 2 (1998 թ. դեկտեմբերի 12-ի ՀՕ-34, 2000 թ. մարտի 10-ի ՀՕ-98, 2001 թ. հունիսի 13-ի ՀՕ-150, 2003 թ. մայիսի 15-ի ՀՕ-43, 2004 թ. մայիսի 10-ի ՀՕ-106, 2005 թ. մարտի 9-ի ՀՕ-174, 2006 թ. հուլիսի 3-ի ՀՕ-296, 2007 թ. մայիսի 3-ի 2007 թ. ՀՕ-28, 2007 թ. հունիսի 30-ի ՀՕ-41, 2008 թ. ապրիլի 4-ի ՀՕ-7, 2010 թ. նոյեմբերի 13-ի ՀՕ-40-Ն, 2011 թ. ապրիլի 1-ի ՀՕ-10-Ն օրենքների լրացումներով և փոփոխություններով)։

<sup>25</sup> Բ ա լ ա յ ն. 2020, 7։

ըին պատերազմից հետո հայտնվել էր թշնամու հսկողության տակ), և ահա Շահումյան վերակոչված նախկին Քարվաճառի շրջանում հիմնադրվել էր նոր բնակավայր՝ Նոր Վերինչեն անվամբ: Այս երևույթը ոչ միայն Արցախի, այլև հայկական տեղանվանահամակարգում օրինաչափ է արդեն:

Երբեմն էլ վերանվանումների հետևանքով առաջացել են տեղանուններ, որոնք պատմականորեն չհիմնավորված գեղարվեստական բնորոշումներ էին. ինչպես՝ Այգեստան (Ասկերանի շրջանի Բալուջա գյուղի, Հաղբուլթի շրջանի Քոչքեկ գյուղի, Մարտակերտի շրջանի Չալու գյուղի վերանվանում), Վարդաձոր (Ասկերանի շրջանի Փրջամալ գյուղի և Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղի վերանվանում), Կաքավաձոր, Վարդաշատ, Բերքաձոր: Այդ վերանվանումներն աշխարհագրական նկարագիր չունեն. դրանք տեղագրական ընդհանրական հատկանիշներ են արտահայտում, որոնցով կարող է բնութագրվել յուրաքանչյուր բնակավայր: Բնականաբար, առավել կայուն ու կենսունակ են այն տեղանունները, որոնք տեղագրական ուրույն նկարագիր ունեն, և վերանվանումները պատմական կապերի խզվածության չեն հանգեցնում:

2020 թ. պատերազմը, ապա և 2023 թ. Արցախյան բռնազաղթն Արցախի տեղանվանական համակարգի զարգացման ընթացքի ամփոփումը դարձան, և հինգերորդ փուլն առանձնացավ անկախության շրջան անվամբ:

#### Եզրակացություն

Արցախի տեղանվանական համակարգի զարգացման պատմությունը հետևյալ շրջանաբաժանմամբ կարելի է ներկայացնել.

առաջին փուլ կամ Հին շրջան՝ Ք. ա. VIII դարից մինչև Ք. հ. V դարը, երկրորդ փուլ կամ Միջին շրջան՝ Ք. հ. V դարից մինչև XVIII դարը, երրորդ փուլ կամ Նոր շրջան՝ XVIII դարից մինչև XX դարասկիզբ (1923 թ.),

չորրորդ փուլ կամ Խորհրդային շրջան՝ XX դարասկզբից մինչև XX դարավերջ (1991 թ.),

հինգերորդ փուլ կամ ԼՂՀ անկախության շրջան՝ 1991–2020 թթ.:

Տեղանվանական համակարգի զարգացման պատմության այս շրջանաբաժանման փորձը և ըստ այդմ՝ առանձին շրջանների սահմանումները պայմանավորված են Արցախի պատմության ու քաղաքական գործընթացների անմիջական ազդեցությամբ: Դրանք ուրվագծում են նաև տվյալ ժամանակահատվածի լեզվական փոփոխությունները, հնարավոր և որոշարկելի դարձնում լեզվի բառապաշարի մայրենի ու փոխառյալ շերտերի հարաբերակցությունը: Տեղանվանական համակարգում այդ փոփոխությունները վկայվել են պաշտոնական վերահսկողությամբ՝ իրավական-փաստաթղթային ամրագրումներով: Ի վերջո, տեղանունները՝ հին կամ նոր, տվյալ ժամանակաշրջանի պահոց դարձած բառամիավորներ են, որոնք անպայմանորեն արտացոլում են տվյալ երկրի ներքաղաքական իրավիճակը, ժողովրդի սոցիալական ու հասարակական կազմակերպվածության մակարդակը, ընկալումները, վերաբերմունքը, սերունդների հարաբերությունները:

Արցախի տեղանվանական համակարգի պատմության շրջանաբաժանման փորձը հաստատում է այն իրողությունը, որ բոլոր դեպքերում փուլեր սահմանելիս պատմական շրջադարձներն են դառնում որոշարկող ու նախանշող:

**Լուսինե Մարգարյան** – Բ. Գ. Թ., դոցենտ: ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայոց լեզվի բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Ղարաբաղի բարբառ և բանահյուսություն, Արցախի տեղանվանագիտություն: Հեղինակ է 2 գրքի և 30 հոդվածի: ORCID: 0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բալայան Վ. 2011, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, «Ջանգակ» հրատ., 419 էջ:

Բալայան Վ. 2020, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, «Ջանգակ» հրատ., 377 էջ:

Բարխուդարյանց Մ. Եպս. 1996, Արցախ, Երևան, «Ամարաս» հրատ., 300 էջ:

ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 17:

Կարապյոզյան Յ. 1998, Սեպագիր տեղանուններ Այրարատում եւ հարակից նահանգներում, Երևան, «Մազադաթ», 394 էջ:

Հարությունյան Բ. Հ. 1994, Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը. – ՊԲՀ, № 1–2, էջ 256–266:

Ղափանցյան Գր. 1961, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 362 էջ:

Մաղալյան Ա. 2007, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 327 էջ + 2 մանուկ ներդիր:

Յակոբեան Ա. 2013, Անանուն (Է. դար), Աշխարհացոյց գիտա-քննական բնագիր. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), թիւ 1–12, էջ 35–186:

Յակոբեան Ա. 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն) Երևան, «Գիտություն» հրատ., 440 էջ + 2 ներդիր:

Չոբանյան Պ. Ա. 2014, 19-րդ դարի առաջին երասնամյակում Արևելյան Հայաստանում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերն ու տեղանվանահամակարգը և դրանց շահարկումները. – Աշխատանքային տետրեր, Արցախ. Ժողովրդագրության և տեղանվանահամակարգի հիմնախնդիրները ԼՂՀ անվտանգության համատեքստում, Երևան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, № 3–4, էջ 11–35:

Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 747 էջ:

Ուլուբաբյան Բ. 1994, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, «Մ. Վարանդեան» հրատ., 378 էջ:

Капанцян Гр. 1956, Историко-лингвистические работы. К началу истории армян. Ереван, Изд. Акад. наук АрмССР, 435 с.

Капанцян Г. А. 1931, Chetto-Armenia: [Сравнительно-лингвистическое исследование, выявляющее до 200 общих слов и форм]. Эривань, Госиздат ССРА, 143 с.

Меликишвили Г. А. 1960, Урартские клинообразные надписи. М., Изд. Акад. наук СССР, 504 с. (<http://annales.info/urartu/ukn/266.htm>).

Нагорный Карабах в 1918–1923 гг. – Сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян. Ереван, Изд. АН Армении, 1992, 756 с.

Никольский М. В. 1896, Клинообразные надписи Закавказья. – Материалы по археологии Кавказа, вып. V, М. тип. О. Гербека, 136 с.

Никонов В. А. 1965, Введение в топонимику. М., «Наука», 180 с.

Описание Карабагской провинции, составленное в 1823 году, 1866. Тифлис, с. 40–45.

Страбон. 1964, География в 17 книгах. Перевод, статья и комментарии Г. А. Стратановского под общей редакцией проф. С. Л. Утченко. Редактор перевода проф. О. О. Крюгер. М., «Наука», книга XI, гл. XIV, с. 496–501, (<https://ancientrome.ru/antlittr/t.htm?a=1260110000>)

## ПОПЫТКА ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ ТОПОНИМИЧЕСКОЙ СИСТЕМЫ АРЦАХА

ЛУСИНЭ МАРКАРЯН

### Резюме

*Ключевые слова: топонимика Арцаха, историческая периодизация, элементы субстрата, языковое влияние, переименования, влияние исторических и политических процессов.*

Попытка периодизации топонимической системы Арцаха имеет целью выявление историко-лингвистических топонимов-реалий и закономерности развития их системы на основе анализа историко-лингвистических фактов.

Периодизация проводится на основе трех принципов:

1. Принцип истории топонимической системы – истории всех ее отдельных этапов.

2. Принцип невозможности абсолютной периодизации.

3. Принцип прямой связи между возникновением топонимов и их изменением параллельно с историей народа.

Учет этих принципов при проведении периодизации топонимической системы проводится по двум направлениям:

1) анализ топографических фактов и исторических реалий и характеристика их исторических пластов;

2) аргументирование стратификации языковых влияний посредством лингвистического анализа топонимов.

Каждый период имеет свой список топонимов, лингво-морфологический анализ которых раскрывает языковые отношения, характерные для данного периода. При этом каждый период представляет характерные для него географические, политические и исторические реалии Арцаха.

Первый период: VIII–V века до н. э. или древний период с двумя подпериодами:

а) период клинописей, с возможными элементами урартского, хетто-хуррийского, ассирийско-вавилонского субстратов;

б) период принятия христианства и появления первых письменных свидетельств, возможны элементы греческого и персидского субстратов.

Второй период: V–XVIII века или средний период с двумя подпериодами:

а) с V по X в. – до установления власти Хачена во всем Арцахе.

б) период X–XVIII вв.

Третий период охватывает XVIII – начало XX вв. Это новый период (формирование и распад союза княжеств Хамсы и формирование административно-политической единицы Елизаветпольской губернии).

Четвертый период: от начала XX в. до конца XX в. (1991 г.) или советский период.

Пятый период: 1991–2020 гг. или период Независимости Арцаха.

Опыт периодизации топонимической системы Арцаха подтверждает тот факт, что во всех случаях этапы определяются поворотными историко-политическими событиями.

*Լուսինэ Մարգարյան – ք. փիլոլ. ռ., դոցենտ, մладший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: карабахский диалект и фольклор, топонимика Арцаха. Автор 2 книг и 30 статей. ORCID:0009-0005-0028-8600. [margaryan.lusine@yandex.com](mailto:margaryan.lusine@yandex.com)*

## AN ATTEMPT TO PERIODIZE THE HISTORY OF THE TOPONYMIC SYSTEM OF ARTSAKH

LUSINE MARGARYAN

### Summary

*Keywords: toponymy of Artsakh, historical periodization, elements of substrate, linguistic impact, renaming, influence of historical and political processes.*

The attempt to periodize the toponymic system of Artsakh is aimed at identifying historical and linguistic toponyms – realities and regularities of development of their system based on the analysis of historical and linguistic facts.

Periodization is carried out on the basis of three principles:

1. The principle of the history of the toponymic system is the history of all its separate stages.

2. The principle of impossibility of absolute periodization.

3. The principle of the direct connection between the emergence of toponyms and their change in parallel with the history of the nation.

Consideration of these principles during the periodization of the toponymic system is carried out in two directions:

1. Analysis of the topographical facts and historical realities and characterization of their historical strata.
2. Argumentation of the stratification of linguistic influences through linguistic analysis of toponyms.

Each period has its own list of toponyms, the linguistic and morphological analysis of which reveals the linguistic relations characteristic of this period. At the same time, each period represents geographical, political and historical realities characteristic of Artsakh.

The first stage: VIII–V centuries BC or the ancient period with two subperiods:

- a. the period of Cuneiform inscriptions with possible elements of Urartian, Hitto-Hurrian, Assyrian-Babylonian substrates,
- b. the period of adoption of Christianity and the appearance of the first written evidence; elements of Greek and Persian substrates are possible.

The second period: V–XVIII centuries or the middle period with two subperiods:

- a. V–X centuries before the establishment of Khachen power on the whole of Artsakh.
- b. period from X–XVIII centuries.

The third stage covers the period from XVIII to early XX centuries. This is a new period (the formation and collapse of the union of principalities of Khamsa and formation of the administrative and political unit of the Elizabetpol province).

The fourth period: from the beginning of the XX century to the end of the XX century (1991) or the soviet period.

The fifth period: from 1991 to 2020 or the independence period of Artsakh.

The experience of periodization of the toponymic system of Artsakh confirms the fact that in all cases the stages are determined by turning historical and political events.

*Lusine Margaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor. Scientific interests: Karabakh dialect and folklore, toponymy of Artsakh. Author of 2 books and 30 articles. ORCID:0009-0005-0028-8600. margaryan.lusine@yandex.com*